
ԼՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԽՈՐՀՐԴԱՀԱՅ ՄԱՍՈՒԼԻ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ (1930-ական թթ.)

ՄԱՐՈՒԹՅԱՆ Հ. Տ.

Որն է երկրի մամուլը արտացոլում է տվյալ պետության սոցիալ-քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքի հիմնական դրսևորումները: Դրանից զատ, թերթային հոդվածների շարադրման սկզբունքները, լեզուն և ոճը ա՛յլ երկրի սոցիալ-քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքի յուրատեսակ արտացոլանքն են: Ասվածը բավական հստակ է երևում հատկապես քաղաքական բռնաճնշումների բարձրակետ համարվող 1936-1937 թթ. խորհրդային կենտրոնական ու հանրապետական մամուլի օրգանների, ի մասնավորի՝ «Պրավդա» և «Խորհրդային Հայաստան» օրաթերթերի հրապարակումների վերլուծության պարագայում:

Նշված պարբերականներն ընթերցելիս առաջին հերթին աչքի է զարնում վիրավորական, վարկաբեկող, զրատապարտող, պիտակավորող բնույթագրումների առատությունը: Բնչո՞ւ էր դա պայմանադրված: Հիշենք, որ դա արդեն ավանդույթ էր, որի հիմքերը, թերևս, ձևավորված էին XX դարասկզբի կուսակցական, ապա և 1917 թ. հոկտեմբերյան հեղափոխությանը անմիջապես հաջորդող տարիներին: Գործընթացը նոր լիցք էր ստացել 1920-ական թվականների կեսերից սկսած՝ «սոցիալիզմի շինարարության» տարիներին ու, հատկապես, կուսակցական «աջ» և «ձախ» զանազան թեքումների, «պլատֆորմների» դիմակայության և բոլշևիկյան «ճշմարիտ» գծի մշակման ընթացքում¹: Գաղափարական՝ իրականում իշխանության համար մղվող պայքարը տրամաբանական ավարտին հասցնելու համար ՀամԳ(Բ)Կ կենտկոմի գլխավոր քարտուղար Բոսիֆ Ստալինը 1934 թ., ՀամԳ(Բ)Կ XVII համագումարից հետո (որտեղ կուսակցության կենտկոմի կազմի ընտրությունների ժամանակ նա ստացավ մեծ թվով «դեմ» ձայներ, իսկ պատգամավորների մի մասն էլ առաջարկեց, որ Ս. Կիրովը դառնա ՀամԳ(Բ)Կ ԿԿ ղեկավար) կազմակերպեց Ս. Կիրովի սպանությունը, որը ներկայացվեց

¹ 1920-30-ական թթ. Հայաստանում տեղ գտած զարգացումների շուրջ վերջին ընդհանրացնող գիտական հրապարակումներից տե՛ս մասնավորապես Մանուկյան Ա., Քաղաքական բռնաճնշումները Հայաստանում 1920-1953 թթ., Ե., 1999, Ղազախեցյան Վ., 1937-ը Հայաստանում, Ե., 2005, Խույնի՝ Հայաստանը 1920-1940 թթ., Ե., 2006, Խույնի՝ Սոցիալ-տնտեսական դրությունը և հասարակական-քաղաքական կյանքը (1923-1929 թթ.), նաև Սոցիալ-տնտեսական վերափոխումները: Խորհրդային ամբողջատիրության հաստատումը (1930-ական թթ.) [Հայոց պատմություն, հ. IV, գիրք առաջին՝ Նորագույն ժամանակաշրջան (1918-1945 թթ.), Ե., 2010, էջ 413-538]:

իբրև սոցիալիզմի թշնամիների ոտնձգություն Խորհրդային Միության բարձրագույն կուսակցական և քաղաքական ղեկավարության դեմ: Սրան հետևեցին բազմաթիվ «մերկացումներ»՝ արդեն իսկ առկա վախի ու կասկածամտության մթնոլորտի ուժեղացում, «ժողովրդի թշնամիների» հայտնաբերումներ, դատավարություններ, գնդակահարություններ: Այս ամենն ուղեկցվում էր «զգաստության» կոչերով, քանի որ սոցիալիզմի թշնամիները՝ օտարերկրյա չար ուժերի հովանավորությամբ, «պայքարում» էին ԽՍՀՄ-ը սոցիալիզմի կառուցման ուղուց շեղելու համար: Արդ, ինչպե՞ս, ի՞նչ ձևակերպումներով ու ինչպիսի՞ փաստարկումներով էր այդ ամենը ներկայացվում մամուլում:

Ինչու՞ է վերոբերյալը կարևորվում: Որովհետև այդ ժամանակներում «գանգվածային լրատվամիջոցներ» ասվածը մամուլն ու ռադիոն էին, որոնք կուսակցական կամ աշխատանքային կոլեկտիվների ժողովների, «ազիտատորների ու պրոպագանդիստների» «բանակի» հետ այն գործիքներն էին, որոնք «ներքններն» էին հասցնում «վերններում» ընդունված որոշումները, մեծապես ազդում էին խորհրդային քաղաքացիների պատկերացումների համակարգի ու, այդպիսով, ինքնության ձևավորման վրա: Այս կերպ էր ստեղծվում այն հենարաններից մեկը (որը հետագայում որակվեց որպես *homo sovieticus*), որն ամբողջատիրական, վարչափրամայական համակարգին տասնամյակներ շարունակ օգնում էր գոյատևելու առանց ներքին խռովող ցնցումների, մի համակարգ, որի հետևանքները և դրսևորումները, ինչպես նաև յուրովի վերարտադրության փորձերը առկա են նաև մեր օրերում:

Առաջնորդողներ: Արդեն իսկ հրապարակումների վերնագրերը կարող են շատ բան հուշել: Այսպես, կարելի է պնդել, որ 1930-ական թվականների հայաստանյան մամուլի (մասնավորապես՝ ՀԿ(Բ)Կ օրգան «Խորհրդային Հայաստան» օրաթերթի) հրապարակումների ոգին, լեզվատճական առանձնահատկությունները մեծապես ազդվել, ձևավորվել են ՀամԿ(Բ)Կ (1952-ից՝ ԽՄԿԿ) ԿԿ-ի օրգան «Պրավդա» օրաթերթի ու հատկապես նրա առաջնորդողների ազդեցության ներքո: Թվարկենք դրանցից մի քանիսը՝ թարգմանաբար արտատպված «Խորհրդային Հայաստանում» 1936-1937, 1953 թթ. «Ժողովրդի թշնամիները բռնված են հանցանքի վրա», «Երկիրն անարգանքի սյունին է գամում ստոր մարդասպաններին», «Հզոր է ու ահեղ ժողովրդի ցատումը», «Նեխած լիբերալները թշնամու աջա-կիցներն են», «Տրոցկիստ լրտեսները, դիվերսանտները, հայրենիքի դավաճանները», «Ստորներից ստորագույնները», «Կապիտալիզմի ռեստավրատորների տրոցկիստական շայկան», «Վերջ տալ բերան-բացությանը մեր շարքերում»: Ինչպես երևում է, «Պրավդայի» առաջնորդողները պարունակում են այնպիսի բառեր, բնութագրումներ, ձևակերպումներ, բառակապակցություններ, որ ընթերցողին անմիջապես «հասկանալի» է դառնում դրանցում նշավակված, քննադատված երևույթների վատ, անպիտան, խորհրդային ժողովրդին վնասակար լինելը: Բնութագրական է նաև, որ «Խորհրդային Հայաստանի»

առաջնորդողների լեզուն իր «թունոտությամբ», այնուամենայնիվ, էապես զիջում է «Պրավդայի» ձևակերպումների «հյուսեղությանը»: Նշենք դրանցից մի քանիսը. «Ավելի բարձր զգաստություն», «Նացիոնալ-ուկրոնիստների անարգ հետնորդները», «Ստալինյան զգաստության ոգով դաստիարակել մասսաներին», «Հայ ժողովրդի արյունը ծծող իժերը», «Վնասարարության աղաղակող մի փաստ էս» և այլն:

«Պրավդայի» առաջնորդողները կամ նման գործառույթ կատարող հրապարակումները (կուսակցական-պետական գործիչների ելույթներ², աշխատավորական կուլեկտիվների որոշումներ ու նամակներ երկրի առաջնորդ(ներ)ին, ԽՍՀՄ գլխավոր դատախազ պետական մեղադրող Ա. Վիշինսկու ելույթները և այլն) յուրատեսակ դանայան տակառի գործառույթ ունեին՝ անընդմեջ ուղղորդված բնույթի բառամթերք, ի մասնավորի՝ ձևակերպումներ մատակարարելով առաջնորդողներում արտահայտված մտքերը քննարկող, տեղերից բերված օրինակներով երևույթը կոնկրետացնող հոդվածներին, որոնք, որպես կանոն, տպագրվում էին չորս էջանոց թերթերի երկրորդ-երրորդ էջերում:

Ի մի բերելով 1936 թ. երկրորդ կեսին և 1937 թ. «Խորհրդային Հայաստանում» հանրապետության ներքին կյանքի քննարկումներին վերաբերող հոդվածների վերնագրերը՝ փորձել ենք հասկանալ, թե ո՞ր որակումներն ու բնութագրումներն էին ավելի հաճախ օգտագործվում, և ի՞նչ քայլեր, գործողություններ էին «առաջարկում» վերնագրերը այդ պիտակավորվող երևույթների ու մարդկանց նկատմամբ:

Ամենաշատ կիրառվող բնութագրումն էր «թշնամի» բառը՝ թե՛ «մաքուր» ձևով, թե՛ «ժողովրդի», «դասակարգային», «քողարկված/ թաքնված», «անարգ» համադրություններով ու բնութագրումներով: Ի՞նչ գործողություններ էին առաջարկվում «թշնամիների» նկատմամբ: Նշենք առավել բնութագրականները. «Թշնամուն հովանավորողը դառնում է նրա գործակիցը. Դիլիջանում ծածկել են տրոցկիստներին», «Կուսակցության թշնամիները դիմակազերծ արվեցին», «Թշնամուն չնկատողը հանցանք է գործում ժողովրդի հանդեպ», «Ոչ մի ներդրամտություն թշնամու և նրա հովանավորների նկատմամբ», «Մինչև վերջ դիմակազերծ անել անարգ թշնամուն և նրա գործակալներին», «Թշնամիներին անողորմաբար կջախջախենք», «Ուր գործել է թշնամին, այնտեղ ճնշվել է ինքնաքննադատությունը», «Մերկացնել թաքնված թշնամու դեմքը», «Կտրել թշնամու նենգ ձեռքը», «Ով թույլ է պայքարում, նա օգնում է թշնամուն», «Մինչև վերջը ոչնչացնել ստախանովյան շարժման թշնամիներին», «Բնաջինջ անել հայ ժողովրդի թշնամիներին», «Թշնամու սև թաթը Բժշկական ինստիտուտում», «Ժողովուրդը պահանջում է գնդակահարել հայրենիքի անարգ թշնամիներին»:

² Բնութագրական օրինակներից է Լ. Բերիայի «Փոշիացնել, հողմացրիվ անել սոցիալիզմի թշնամիներին» հոդվածը (Խորհրդային Հայաստան, 21.VIII.1936):

Ինչ էր առաջարկվում իրականացնել «ժողովրդի թշնամիներին» նկատմամբ, և ինչ կերպ էին նրա նք բնութագրվում. «Ժողովրդի թշնամիներին պետք է ոչնչացնել», «Հաշտվողականությունը ժողովրդի թշնամիների նկատմամբ՝ հավասար է նրանց գործակցելու», «Ժողովրդի թշնամիները չպետք է ապրեն», «Անողոր լինել ժողովրդի թշնամիների նկատմամբ», «Մաքրել Ֆինժողկոմատի կազմակերպությունը ժողովրդի թշնամիներից», «Դուրս շարտել ժողովրդի թշնամիներին կերպարվեստի ֆրոնտից», «Ժողովրդի թշնամիները Քանաքեռգէտում», «Անողոր դատաստան ժողովրդի թշնամիների նկատմամբ», «Փոշիացնել, հողմացրիվ անել ժողովրդի ստոր թշնամիներին»:

Ընդհանրացնելու պարագայում, «Խորհրդային Հայաստանի» 1936 թ. երկրորդ կեսի 1937 թթ. հոդվածների վերնագրերից «թշնամու» կերպարի բացահայտման նպատակով թերևս կարելի է առանձնացնել հետևյալ հարցադրումները. 1. ո՞վ է թշնամին, 2. որտե՞ղ է գտնվում նա կամ ու՞ր է ցանկանում մտնել, 3. ինչպիսի՞ն է թշնամին, ի՞նչ հատկություններ ունի կամ, ավելի ճիշտ, ի՞նչ հատկություններ են նրան վերագրվում, 4. ի՞նչ է անում թշնամին, 5. ինչպե՞ս հայտնաբերել նրան, 6. ինչպե՞ս վարվել (կամ՝ արդեն վարվել են) նրա հետ: Պատկերը (թերևս՝ ոչ ամբողջական) կատարվի մոտավորապես հետևյալը. 1. տրոցկիստական-գինովնական բլոկի անդամ է, գյուղի ղեկավարության անդամ է, աջակիցներ, հովանավորներ ու գործակալներ ունեցող մարդ է, 2. գտնվում է գյուղի ղեկավարության մեջ, տարաբնույթ հիմնարկ-ձեռնարկություններում, իսկ նրա աջակիցները՝ կուսակցության շարքերում, 3. անարգ է, ունի աջակիցներ, գործակալներ, նաև հովանավորներ, որոնք այդ կերպ դառնում են նրա գործակիցները, 4. քայքայում է կոլտնտեսությունը, սադրանքներ է անում, ճնշում է քննադատությունը և ինքնաքննադատությունը, ոտնձգություններ է ցուցաբերում խորհրդային թատրոնի նկատմամբ, 5. անհրաժեշտ է բոլշևիկյան զգաստություն, 6. պետք է նկատել (չնկատողը հանցանք է գործում), դիմակազերծ անել թշնամուն, նրան և նրան աջակցողներին պետք է հեռացնել, վտարել կուսակցությունից, գյուղի ղեկավարությունից, տարբեր կազմակերպություններից, նրա հետ չպետք է լինել հաշտվողական, ներողամիտ (նաև հովանավորողների նկատմամբ), նա ենթակա է անողոր վերաբերմունքի, անողոր դատաստանի, անողոր ջախջախման, նրան պետք է խստագույնս պատժել, արմատախիլ, բնաջինջ անել, նա չպետք է ապրի, նրան պետք է բնում խեղդել, գնդակահարել (ինչը կլինի նախազգուշացում մյուսների համար), մինչև վերջ ոչնչացնել, փոշիացնել ու փռնել էլ հողմացրիվ անել:

Հաջորդ ամենաշատ օգտագործված բնութագրումներն էին՝ «դավաճան», «հակահեղափոխական», «վնասարար», «լրտես»: «Դավաճան» որակմամբ առանձնացրել ենք հետևյալ օրինակները. «Դաժանորեն պատժել դավաճաններին», «Ոչ մի գթություն դավաճաններին», «Պրոլետարական հատու սուրը կիջնի դավաճանների գլխին», «Ոչնչացնել ստոր

դավաճաններին», «Գնդակահարել հայրենիքի ստոր դավաճաններին և ֆաշիստական լրտեսներին»:

«Հակահեղափոխական» պիտակավորմամբ վերնագրերից են. «Թաքնված հակահեղափոխականները դիմակազերծ արվեցին», «Մերկացված հակահեղափոխականը», «Հակահեղափոխական տրոցկիստական-նացիոնալիստական վիժվածքները վտարվեցին գրողների միությունից», «Մինչև վերջ ոչնչացնել հակահեղափոխական բոլոր թափափուկներին», «Բնաջինջ անել հակահեղափոխական սպեցիֆիզմի և դաշնակցության վերջին բեկորները»:

«Վնասարարները» բնութագրված են հետևյալ կերպ. «Վնասարար կերպով են անցկացրել կաբելները», «Նորագավթում գործում է վնասարարական սև ձեռքը», «Մերկացնել մանկական երկաթգծի շինարարության վնասարարների դեմքը», «Պատմագիտության ֆրոնտից լիկվիդացիայի ենթարկել վնասարարության հետքերը», «Սղնախի շրջանի աշխատավորները պահանջում են գնդակահարել ժողովրդի ստոր թշնամիներին, լիովին մերկացնել ու ամենախիստ կերպով պատժել վնասարարներին աջակցողներին»:

«Լրտեսներին» անդրադարձ է արված հետևյալ վերնագրերում. «Մահ ֆաշիստ լրտեսներին», «Խորհրդային ժողովրդի կամքով բնաջինջ արվեց հայրենիքի դավաճանների, ֆաշիստական լրտեսների բանդան», «Աշխատավորները միահամուռ կերպով ողջունում են լրտեսների բանդայի նկատմամբ կայացված դատավճիռը»:

Ընդհանրացնելով, կարելի է նկատել, որ վերոնշյալ չորս կատեգորիայի ներկայացուցիչները «տրոցկիստական-գինովական» խմբավորման անդամներ են, որոնց, որպես սկզբունք, առաջարկվում է «մերկացնել» և «լիկվիդացիայի ենթարկել», ապա և «օրենքի ամբողջ խստությամբ պատժել», «մինչև վերջ ոչնչացնել» ու «բնաջինջ անել», ինչպես և՛ «գնդակահարություն» ու «մահ»:

Վերնագրային «ներկայանակը» լրացնում են գաղափարախոսա-կան և անհատին պիտակավորող հենք ունեցող այնպիսի բնութագրումներ, ինչպիսիք են՝ «նացիոնալիստ», «դաշնակցական» («Դատապաշտպանների կոլեկտիվը մաքրել բուրժուական նացիոնալիստներից», «Կոտայքում նացիոնալիստական-դաշնակցական տարրերն ազատ գործում են», «Մերկացնել պատմության նացիոնալիստական ֆալսիֆիկացիան»), «նեխած լիբերալիզմ/լիբերալներ» («Կուսակցությունը չի կարող իր շարքերում հանդուրժել լիբերալներին. Նեխած լիբերալիզմի պտուղները», «Նեխած լիբերալիզմի ցցուն օրինակ», «Մերկացնել նեխած լիբերալներին թշնամու աջակիցներին»), ինչպես նաև «ճիվաղ» («Ճզմել, բնաջինջ անել տրոցկիստական գարշելի ճիվաղներին», «Մեծ է ու ահավոր խորհրդային ժողովրդի ցասումը. բնաջինջ անել երկրի երեսից տրոցկիստական ճիվաղներին»), «սրիկա» («Սողացող սրիկան», «Սրիկային վտարել կուսակցությունից»), «իժ» («Ճզմել, ոչնչացնել այդ իժերին», «Խորհրդային

օրենքի գործողությանը բնաջինջ կանի թունավոր իժերին», «Մինչև վերջ ոչնչացնել թունավոր իժերին»), «վիժվածք» («Տրոցկիստական վիժվածքները վտարվեցին կուսակցությունից», «Հակահեղափոխական տրոցկիստական-նացիոնալիստական վիժվածքները վտարվեցին գրողների միությունից»), «ագենտ» («Գերման-ճապոնական ֆաշիզմի հայկական ագենտները») և այլն:

Հնարքներից մեկը, որը 1936-1937 թթ. առկա էր Խորհրդային Հայաստանի մամուլում, հրապարակումների վերնագրերում ու տեքստերում բացասական բառակապակցությամբ (որոշիչ-որոշյալով) կազմված մակդիրների զանգվածային կիրառությունն էր: Այս հնարքը, թերևս, նույնպես վերցված էր «Պրավդայից»: Այդպես ծնվեցին ու զանգվածային լրատվության միջոցներով սկսեցին մատուցվել այնպիսի բացասական բնութագրումներ, ինչպիսիք էին՝ «կեղտոտ տականք», «գարշելի ճիվաղ/ դավաճան», «ստորաքարշ գործակալ», «նեխած լիբերալ», «անարգ հետևորդ», «նենգ ձեռք», «ստոր մարդասպան/ թշնամի/ դավաճան», «սողացող սրիկա», «թունավոր իժ» և նման այլ ձևակերպումներ:

Կարծում եմ՝ մակդիրների մեծաքանակ օգտագործումը պայմանավորված էր նա մի հանգամանքով: Խորհրդային իշխանությունը արմատական փոփոխություններ էր առաջացրել նորաստեղծ երկրի բնակչության կյանքի շատ և շատ բնագավառներում: Դրանց թվում մեջտեղ եկավ ու հաստատուն տեղ գրավեց հեղափոխական հոռետորաբանությունը: Այն բազմապիսի դրսևորումներ ուներ և բնութագրվում էր մասնավորապես նոր եզրույթների զանգվածային կիրառությամբ: Այդ նոր ձևակերպումները հաճախ ունեին օտար ու, հետևաբար, շատ-շատերի համար անհասկանալի ծագում, ինչը նպաստում էր դրանց ոչ այնքան խորքային ընկալմանը, որքան անգիր, առանց առանձնապես հասկանալու՝ պարզապես օգտագործմանը: Թերևս սա էր այն պատճառներից մեկը, որ խորհրդային քարոզչության գործը կազմակերպողներին դրդեց զանգվածաբար գործածել լեզվաբանական այնպիսի հնարք, որպիսին էին մակդիրները, որոնք որևիցե եզրույթից առաջ դրվելու պարագայում յուրովի ուղղորդում էին ընթերցողին, նպաստում եզրույթի «ճիշտ» հասկանալուն:

Այսպիսով, 1936 թ. երկրորդ կեսին 1937 թ. ընթացքում «Խորհրդային Հայաստան» օրաթերթում «տրոցկիստական-զինովևական խմբակին» վերաբերող վերնագրային մակարդակով մատուցվող ձևակերպումներն առաջին հերթին ուղղված էին հրապարակումներում քննարկվող երևույթների ու մարդկանց վարկաբեկմանը, նվաստացմանը, պիտակավորմանը: Գրեթե չեն հանդիպում չեզոք վերնագրեր: Նպատակը հստակ է՝ խփել, ստորացնել թիրախ ընտրված անհատին, խմբին կամ երևույթին³: Մա, իհարկե,

³ Հարցի տեսական քննարկումները տե՛ս, օրինակ. **Блакар Р. М.** Язык как инструмент социальной власти (теоретико-эмпирические исследования языка и его использование в социальном контексте) (Язык и моделирование социального взаимодействия. Сборник статей, М., 1987, с. 88-125).

ընդհանարապես քաղաքական և քարոզչական պայքարում ընդունված գործելակերպ է, սակայն վերոնշյալ բնութագրումների լեզուն և ոճը շատ «թունոտ» են, ինչպես ասում են, մինչև թունդ հայիոյանք՝ կես քայլ է: Ընդ որում, դա այն պայմաններում, երբ թիրախավորվածը մամուլով պատասխանելու հնարավորություն չուներ, պարզապես զրկված էր դրանից:

Ինչպես արդեն նշեցինք, 1936-1937 թթ. «Խորհրդային Հայաստանի» վերնագրերը ընթերցողին մեծ չափով հուշում էին, թե ինչի մասին է խոսվելու հրապարակումներում: Անդրադառնանք նաև հոդվածների տեքստերին:

1936 թ. հուլիսի 9-ից քաղաքական բռնաճնշումները Հայաստանում նոր թափ ստացան՝ այդ կերպ, փաստորեն, նոր էջ բացելով Խորհրդային Հայաստանի ներքին քաղաքական, տնտեսական ու մշակութային կյանքում: Ինչպես շարադրված է «Խորհրդային Հայաստանի» 1936 թ. հուլիսի 11-ի համարում, «ՀամԳ(Բ)Կ Անդրերկրումը հայտնում է Հայաստանի Կ(Բ)Կ կենտկոմի քարտուղար ընկեր Խանջյանի մահը, որ տեղի ունեցավ 1936 թվականի հուլիսի 9-ին, ինքնասպանության ակտի հետևանքով: Ինքնասպանության ակտը դիտելով որպես փոքրագույն արտահայտություն, որն անվայել է մանավանդ կուսակցական կազմակերպության ղեկավարի համար, ՀամԳ(Բ)Կ Անդրերկրումն անհրաժեշտ է համարում հայտնել կուսակցության անդամներին, որ ընկեր Խանջյանը վերջին ժամանակներս իր աշխատանքի մեջ մի շարք քաղաքական սխալներ էր թույլ տվել, որոնք արտահայտվել էին նացիոնալիստական ու հակահեղափոխական-տրոցկիստական տարրերի մերկացման գործում բավարար զգաստություն չցուցաբերելու մեջ: Գիտակցելով այդ սխալները, ընկեր Խանջյանը քաջություն չունեցավ գործնականում բոլշևիկորեն ուղղելու դրանք և դիմեց ինքնասպանության: Ընկեր Խանջյանի ընդհանուր վիճակը սաստկանում էր նաև նրա տնական հիվանդությամբ - ծանր տեսակի տուբերկուլյոզով (ընդգծումները մերն են - Մ. Հ.)»⁴: Մամուլի պաշտոնական հաղորդագրություններում վերոնշյալ ընդգծված բնութագրումներին զուգահեռ հայտնվեցին այլ ձևակերպումներ. «Ժողովն Ա. Խանջյանի վարմունքը համարում է կուսակցության նկատմամբ նրա ցուցաբերած երկերեսանիության բոլորումը: Խճողվելով իր նացիոնալիստական սխալների ու կապերի մեջ, Ա. Խանջյանը դիմեց ինքնասպանության դավաճանական պրովոկացիոն ակտին, մի ակտ, որն ուղղված է կուսակցության դեմ

⁴ «Ինքնասպանությունն» իրականում կեղծիք էր: Հարցի քննարկումը տե՛ս, օրինակ, Ալազան Վ., Տառապանքի ուղիներով (Հուշեր) (Ե., 1990, էջ 4-9), Փաշայան Ա., Բժիշկ Գրիգոր Սադյան. ապրած ու չապրած տարիներ (168 ժամ, 21.III.2013): Սակայն «իրողությունը» կասկածի տակ դնողներին ու անզուշաբար դրա մասին բարձրաձայն արտահայտվողներին, ինչպես վկայում են ժամանակակիցները, առաջադրվում էին քաղաքական բնույթի մեղադրանքներ. նրանք դատապարտվում էին գնդակահարության կամ, լավագույն դեպքում, արտրի:

(ընդգծումները մերն են - Մ. Հ.)⁵: Մեկ այլ հրապարակման մեջ նշվում էր, «...Այդ կրակոցը մենք չենք կարող անվանել այլ կերպ, քան դավաճանական կրակոց, քանի որ այդ կրակոցով վնաս է հասցվում կուսակցությանը, սնունդ է տրվում մեր ռիւերին թշնամիներին», «ինքնասպանությունը» որակվում էր որպես «...ամոթալի ակտ, փոքրագույն դավաճանական ակտ» (ընդգծումները մերն են - Մ. Հ.)⁶: Հայաստանի Կ(Բ)Կ կենտկոմի նախկին քարտուղար Խանջյանի ինքնասպանության նմանատիպ բնութագրումներ էին պարունակում Ադրբեջանի կոմկուսի, Թիֆլիսի, Լենինականի, Կիրովականի կուսակցիկների, կոմերիտական ակտիվի ժողովները⁷: Հատկանշական է, որ որոշումներին կցվում էին Բ. Ստալինին ու Անդրերկրկոմի քարտուղար Լ. Բերիային հավատարմության տողեր պարունակող նամակներ: Բսկ օգոստոսի 14-ին (ասես Ա. Խանջյանի մահվան 40-րդ օրվան ընդառաջ) հրապարակվում է հաղորդագրություն այն մասին, որ տեղի է ունեցել Հայաստանի կոմունիստական ու կոմերիտական ակտիվի ընդունելությունը Լ. Բերիայի մոտ: Մի քանի օր անց, օգոստոսի 19-ին «Պրավդայում» հրապարակվում է Լ. Բերիայի ուղենշային հոդվածը՝ «Փռհացնել, հողմացրիվ անել սոցիալիզմի թշնամիներին», որտեղ ասվում էր. «Զգաստություն չհայտարարելով տրոցկիստների և դաշնակների դեմ մղվող պայքարում, երկերեսանիություն անելով կուսակցության հանդեպ, Խանջյանն ուղղակի հովանավորում էր այն ազգայնական սանձարձակ տարրերին, որոնք բուն էին դրել հայ ինտելիգենցիայի մեջ, գրողների մի որոշ հատվածում...»⁸:

1936-1937 թվականներն անցնում են Խանջյանի կողմից «հովա-նավորված» կուսակցական, պետական, մշակութային գործիչների, շարքային քաղաքացիների «մերկացումներով», «դատապարտումներով», նաև գնդակահարություններով ու դրանք ողջունող աշխատանքային կոլեկտիվների, զանազան կազմակերպությունների բանաձևերով ու նամակներով: Այդ ամենն արդեն հայտնի բառամթերքով, «բանալի» բառերի բազմակի օգտագործումներով իր ուղղակի արտացոլումն էր գտնում «Խորհրդային Հայաստանի» էջերում:

Ստորև շեշտադրել ենք այն հրապարակումները և դրանցում կիրառվող բնութագրումները (նաև դրանց յուրատեսակ դիսամիկան), որոնք վերաբերում էին Բ. Ստալինին⁹: Դրանց մեծագույն մասը փառաբանումներ էին, որոնք

⁵ Հայաստանի Կոմկուսի ակտիվի ժողովի բանաձևը (Խորհրդային Հայաստան, 14.VII.1936):

⁶ Անարգ քայլ (Խորհրդային Հայաստան, 15.VII.1936):

⁷ Նույն տեղում, 16, 17, 22.VII.1936:

⁸ Նույն տեղում, 21.VIII.1936:

⁹ Հարյուրավոր նման հրապարակումներ են եղել: Անդրադարձել ենք միայն 1936 թ. հուլիս-դեկտեմբեր ամիսներին «Խորհրդային Հայաստան» օրաթերթում տեղ գտած տեքստերին:

ավարտվում էին շնորհակալության տարաբնույթ ձևակերպումներով¹⁰։ Բերենք մի քանի օրինակներ։ ԽՍՀՄ Սահմանադրության նախագծի քննարկման առիթով կոլտնտեսականը նկատում է. «Այս երջանիկ ու խաղաղ կյանքի համար եմ ողջունում Սահմանադրության նախագիծը և երկար կյանք ցանկանում ընկեր Ստալինին, որն ամրացնում է մեր ինտերնացիոնալ եղբայրությունը»¹¹։ Ընդունված էր, որ ելույթների վերջում հնչում էր «Կեցցե՛ մեր մեծ, սիրելի առաջնորդ և ուսուցիչ ընկ. Ստալինը» ձևակերպումը¹²։ «Ստալինյան» որակումն ստացած նոր սահմանադրության նախագծի քննարկման ժամանակ համալսարանի ուսանողների գնահատականը վերնագրված էր. «Մենք երջանիկ ենք, որ ապրում ենք ստալինյան դարում»¹³։ Մեկ այլ գնահատական սկսվում է հետևյալ տողերով. «Երբ կարդում եմ աշխարհի ամենահանճարեղ մարդու՝ սիրելի Ստալինի կողմից մշակված Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Սահմանադրությունը, ուրախությունից լցվում է սիրտս և հուզվում եմ։ Բնչու՞ չուրախանալ և չհուզվել. չէ որ ես ստալինյան դարի միլիոնավոր ծիծաղկոտ, խիզախ երիտասարդներից մեկն եմ»¹⁴։ Աշխարհի տարբեր երկրներից Հայաստան ներգաղթածների հրապարակումները¹⁵ դրված են «Շնորհակալություն մեծ Ստալինին հայրական հոգատարության համար» խորագրի ներքո։ Մեկ այլ օրինակ. Բջևանի շրջանի Դոստոյ գյուղի 91-ամյա կոլտնտեսական Պողոս Ղարազյոզյանը նշում է. «Ծերությունը մեզ չի հուսահատեցնում, գիտեմ, որ քանի կենդանի եմ, կապրենք մեր սիրելի Ստալինի ջերմ հոգատարության պայմաններում»¹⁶։

¹⁰ Դժվար է ասել, թե նման տեքստերի ո՞ր մասն էր ժամանակի ոգուն, քաղաքական կոռեկտությանը (политкорректность) տուրք տալու անհրաժեշտության դրսևորում, ո՞ր մասը՝ սրտանց ասված խոսք, և ո՞ր մասը՝ թղթակիցների կամ խմբագիրների կողմից «գունագարդված» տեքստ։ Համենայն դեպս, կարելի է վստահորեն պնդել, որ առկա էին բոլոր երեք (գուցե և ավելի) մոտեցումները։

¹¹ Երկար կյանք ընկեր Ստալինին (Վեյիս Վեյիսով. Բասարգեչարի շրջանի Մեծ Մազրա գյուղի կոլտնտեսության անասնապահական ֆերմայի բրիգադիր) (Խորհրդային Հայաստան, 12.VII.1936)։

¹² Տե՛ս, օրինակ, Աշխատանքի ամեն ճակատամասում ավելի ամրացնել Անդրկովկասի ժողովուրդների եղբայրությունը. Երևանի Ստալինյան ռայոնի կուսակցական և կոմերիտական աշխատողների ընդունելությունը ընկեր Ամատունու մոտ (նույն տեղում)։

¹³ Նույն տեղում, 28.VII.1936։

¹⁴ Բաբախանյան Վ., Պատվով կկատարենք մեր սրբազան պարտականությունը (նույն տեղում, 28.VII.1936)։

¹⁵ Միտինգներ Արաբկիրում։ Մա է աշխատավորների իսկական հայրենիքը։ Նուբարաշենը կբարգավաճի նոր թափով։ Մենք կաշխատենք բազմապատիկ եռանդով։ Մեր մասին հոգում է ինքը, մեծ Ստալինը։ Կարդարացնենք խորհրդային քաղաքացու բարձր կոչումը (նույն տեղում, 26.VII.1936)։

¹⁶ Նույն տեղում, 18.VII.1936։

Թբիլիսիի գործարաններից մեկի բանվորների նամակը երկրի ղեկավարին արևելյան ոճով գովերգության մի բնութագրական օրինակ է. «Մեր թանկագին և սիրելի առաջնորդ ու բարեկամ ընկեր Ստալին ն. ...մենք, շոգեքարշերի վերանորոգման քո պանծալի անունը կրող գործարանի բանվորներս, ցանկանում ենք դիմել քեզ, մեր հանձարեղ առաջնորդին, հորն ու ուսուցչին, մենք ցանկանում ենք ասել քեզ մեր սրտի խորքից բխող խոսքերը:...(նոր Մահմանադրության «ոսկե» տողերը կարդալուց ու քննարկելուց հետո – Մ. Հ.): Եվ այս օրերին, երբ քո անունը չի իջնում բանվորների ու կոլտնտեսականների, պրոֆեսորների ու կարմիր բանակայինների, ծերունիների, երեխաների ու մայրերի - ամբողջ ժողովրդի շրթունքներից, երբ քո անունը վառվում է որպես սոցիալիզմի հաղթանակների ուղեցույց աստղ, երբ քո անունը միլիոնները բարձրացրել են որպես մարտական դրոշ...Դու, թանկագին առաջնորդ, մեզ միշտ հիշեցնում ես արթուն զգաստության մասին, մեր թշնամիների նկատմամբ աչալուրջ լինելու մասին: Մենք երդվում ենք քո առաջ, ընկեր Ստալինի, որ քո հավատարիմ աշակերտ ընկեր Լավրենտի Բերիայի ղեկավարությամբ մենք էլ ավելի ուժեղ, հարձակողական ստալինյան զգաստություն կդաստիարակենք մեր մեջ աշխատանքի բոլոր ճակատամասերում:

Կեցցե՛ մեր անպարտելի գործը – Լենին-Ստալինի գործը:

Կեցցե՛ մեր մեծ, իմաստուն, սիրելի առաջնորդ Ստալինը»¹⁷:

Երևան-Գյումրի Նոր երկաթուղու բանվոր-ծառայողների և ինժեներատեխնիկական անձնակազմի թուուցիկ միտինգը եզրափակվում է «մեր սրտերն ավելի ուժգին, ավելի մեծ սիրով են բաբախում մեր առաջնորդների, մեր թանկագին, մեր սիրելի Ստալինի համար» հավաստիացմամբ¹⁸: Երևանի պահածոների գործարանի 700 հոգանոց միտինգը, «Պրավդայի» առաջնորդողի ընթերցումից հետո, արձանագրում է. «Մենք մեր կրծքով կպաշտպանենք մեր առաջնորդներին, հանձարների հանձարին, մեր սիրելի հորը՝ մեր թանկագին Ստալինին, ասում է ընկ. Գարեգին Գևորգյանը»¹⁹: Երևանի կարի գործարանի աշխատավորների միտինգում «տրոցկիստական-զինովական» որակված խմբի գործունեությանը նվիրված «Պրավդայի» օգոստոսի 15-ի առաջնորդողի ընթերցումից հետո նշվում է. «Տեղոր ընկեր Ստալինի և նրա զինակիցների դեմ՝ նշանակում է տեղոր ամբողջ աշխարհի առաջավոր մարդկության դեմ: Ընկեր Ստալինը մեր աշխատավորների սիրտն է, մեր հոգին, մեր լուսատու փարոսը, որը մեր երկիրը տանում է հաղթանակից հաղթանակ: Պետք է ոչնչացնել նրանց, ովքեր փորձում են ձեռք բարձրացնել աշխատավոր մարդկության մեծ սրտի՝ ընկեր Ստալինի վրա»²⁰:

¹⁷ Ընկեր Ստալինին. Թբիլիսիի (Թիֆլիսի) շոգեքարշերի վերանորոգման Ստալինի անվան գործարանի բանվորների նամակը (նույն տեղում, 23.VIII.1936):

¹⁸ Դաժանորեն պատժել դավաճաններին (նույն տեղում, 18.VIII.1936):

¹⁹ Առավելագույն պատիժ ֆաշիստական ստորաքարշ գործակալներին (նույն տեղում, 18.VIII.1936):

²⁰ Չպետք է ապրեն խորհրդային արևի տակ (նույն տեղում):

Տրոցկիստական-գինովական խմբի 16 ղեկավարների գնդակահարությունից հետո հրապարակումներից մեկում նշվում է. «Պողպատե պարսպի պես կանգնած է ամբողջ խորհրդային ժողովուրդն ընկեր Ստալինի՝ մեր առաջնորդի, հոր և բարեկամի շուրջը, - այսպես են ասում Մոսկվայի «Տիգրիսի» գործարանի բանվորները»²¹: Վերոնշյալ երևույթին գնահատական տալիս Երևանի տրամվայի աշխատողների միտինգում ասվում է. «...ընկեր Ստալինի անունը լսելիս մեր բանվորական բազուկները նոր ուժ են ստանում»²²:

Գովերգման մեկ այլ բնութագրական օրինակ է Բաքվի աշխատավորության նամակը Ի. Ստալինին. «Մեր թանկագին ուսուցիչ, առաջնորդ, բարեկամ և հայր: ...ամբողջ խորհրդային ժողովուրդն ուս ուսի տված ընթանում է քո հետևից, լենինյան-ստալինյան կուսակցության հետևից:

Մեր ամբողջ ուրախ, երջանիկ կյանքը, այն բոլոր հաջողությունները, որ ձեռք է բերել խորհուրդների երկիրը, արդյունք են քո անձնագրի աշխատանքի, քո հանճարեղ ու իմաստուն ղեկավարության:

Չկա ավելի մեծ երջանկություն, չկա ավելի մեծ ուրախություն, քան ստալինյան դարաշրջանում ապրելն ու աշխատելը, մոտիկ, հարազատ ու սիրելի **Ստալինի** ղեկավարությամբ աշխատելը...

Փա՛ռք մեր մեծ, իմաստուն առաջնորդին, ուսուցչին – **Իոսիֆ Վիսսարիոնովիչ Ստալինին**»²³: Տեքստում խիստ ընդգծմամբ առանձնանում են Ստալինի (13 անգամ) և Լենինի (1 անգամ) անունները, մեկ անգամ էլ հիշվում է «Մարքսի-Էնգելսի-Լենինի-Ստալինի գաղափարները» ձևակերպումը:

Ուսումնական տարվա սկզբին ՀԿ(Բ)Կ ԿԿ-ն նամակով դիմում է Հայաստանի դպրոցականներին, որտեղ նույնպես երկրի ղեկավարը վեր է հառնում որպես իսկական հայր. «Մեծ Ստալինը, որը հայրական ամենազերմ գուրգուրանքով և ուշադրությամբ շրջապատել է ձեզ բոլորիդ, Խորհրդային Միության բոլոր երեխաներին ու պատանիներին, մեծագույն ուշադրությամբ հետևում է ձեր առաջադիմությանը, հոգ է տանում, որպեսզի դուք լավ դասագրքեր, տետրակներ ու գրենական պիտույքներ ունենաք: Նա հոգ է տանում, որպեսզի դուք ավելի պատրաստված դասատուներ ունենաք»²⁴:

Հայաստանի խորհրդային գրողները Ստալինին զեկուցելիս նույնպես նրան որակում են իբրև «բարեկամ» և «ուսուցիչ». «Մեր թանկագին ընկեր, մեր սիրելի հայր, մեր հարազատ բարեկամ ու հանճարեղ ուսուցիչ ընկեր Ստալին:

²¹ Երկիրը ողջունում է Գերագույն դատարանի դատավճիռը (նույն տեղում, 26.VIII.1936):

²² Տեղորիստական բանդայի գնդակահարումը թող լինի ահեղ նախազգուշացում բոլոր թշնամիների համար (նույն տեղում):

²³ Բաքվի նավթաթոր գործարանների բանվորների, ինժեներների և ծառա-յողների նամակն ընկեր Ստալինին (նույն տեղում, 28.VIII.1936):

²⁴ Միլիտերի դպրոցականներ (նույն տեղում, 1.IX.1936):

...Հայաստանի Խորհրդային Գրողների Միությունը գարշանքով դուրս է շարժվել իր շարքերից հակահեղափոխական այդ ստոր տականքներին [նկատի ունեն Դր. Միմոնյանին, Վ. Ալազանին, Ա. Բակունցին, Գ. Մահարուն, Վ. Թոթովենցին, Գ. Վանանդեցուն և Վ. Նորենցին – Մ. Հ.], մաքրել է իր մարմինն այդ թարախից»²⁵:

Մինչդեռ աշխատավորության շարքային ներկայացուցիչը փորձում է ոչ թե խոսքով, այլ գործով ապացուցել իր նվիրվածությունը երկրի ղեկավարին: Տրոցկիստական-գիմովնական խմբի նկատմամբ դատավճռի իրականացումը ողջունելուց հետո, նա խոստանում է. «Հարազատ Իոսիֆ Վիսսարիևովիչ: Ի պատասխան տրոցկիստական-գիմովնական հակահեղափոխական բանդայի նողկալի արարքներին՝ պարտավորվում եմ իմ առաջին կոմբայնի արտադրանքը հասցնել մինչև 1100 հեկտարի, տիրապետել տեխնիկային, հասնել աշխատանքի էլ ավելի մեծ արտադրողականության: ...Կեցցե՝ մեր սիրելի, մեր հարազատ մեծ Ստալինը»²⁶:

Մեկ այլ աշխատավորի՝ կոլտնտեսական Թելո Մինայանի խոսքը Ստալինի մասին նույնպես անպաճույճ է. «Ընկ. Ստալինը մեզ բախտավոր կյանք պարգևեց, այդ կատաղած շները ձեռք էին բարձրացնում ընկեր Ստալինի և մեր ղեկավարների վրա, ձեռք էին բարձրացնում մեր երջանկության վրա»²⁷:

Երևանի քաղաքային խորհրդի 5-րդ պլենումի մասնակիցների որոշման մեջ նա կան «բովանդակալից» ձևակերպումներ»²⁸:

Եթե ընդհանրացնելու լինենք «Խորհրդային Հայաստանում» 1936 թ. երկրորդ կեսին տեղ գտած՝ Բ. Ստալինին այս կամ այն կերպ առնչվող հրապարակումները, ապա մեր առջև վեր է հառում գրեթե աստվածային ունակություններով օժտված մի անձնավորություն: Նա ուսուցիչ է, առաջնորդ, իմաստուն ու սիրելի ղեկավար, բայց և միաժամանակ հայր, հարազատ մարդ, պարզապես բարեկամ: Նա աշխարհի ամենահանճարեղ մարդն է, բայց նրա հետ կարելի է խոսել, նրան կարելի է դիմել «դու»-ով: Ամբողջ մի դար նրա անունն է կրում՝ ստալինյան: Ու այդ ժամանակաշրջանում ապրելն ու աշխատելը ամենամեծ երջանկությունն է և ուրախությունը: Նա անձնագոհ աշխատող է, մտածում է բոլորի մասին՝ դպրոցականից մինչև ալեհեր ծերունի: Նա Լենինի հետ կերտել է գաղափարախոսություն, նոր սահմանադրություն, ընդհանրապես պատմությունը, նա ունի պողպատե ամրության ձեռքեր, ամրապնդում է

²⁵ Հայաստանի Խորհրդային գրողները ժողովուրդների մեծ առաջնորդ ընկեր Ստալինին (նույն տեղում):

²⁶ Շքանշանակիր կոմբայնավար Գուրգեն Մարջանյանի նամակն ընկ. Ստալինին (նույն տեղում, 4.IX.1936):

²⁷ Այվազյան Ա., Քաղաքական ագիտացիան հզոր զենք է դարձել մեր ձեռքին (նույն տեղում, 22.IX.1936):

²⁸ Մեր հարազատ հայր, մեր մեծ ուսուցիչ, մեր կյանքի լուսաշող արև (նույն տեղում):

բազմազգ երկրի ժողովուրդների բարեկամությունը, սոցիալիզմի հաղթանակների ուղեցույց աստղն է, շարքային աշխատողների սիրտն է, հոգին, լուսատու փարոսը, ընդհանրապես աշխատավոր մարդկության սիրտը, համաշխարհային պրոլետարիատի հանճարեղ առաջնորդը, ու այդ պատճառով էլ նրա անունը մարտական դրոշ է միլիոնավոր մարդկանց համար:

Այսպիսի՝ տեղեկատվություն էր մատուցվում, այսպիսի՝ ինքնություն էր պարտադրվում խորհրդային ընթերցողին, ասել է, թե՛ ժողովրդին: Սա է, թերևս, այն պատճառներից մեկը, որ բռնադատվածների ու նրանց ժառանգների մի զգալի մասը իրենց նկատմամբ կիրառված բռնությունների համար մեղավոր չէր համարում ռեժիմին ու նրա առաջնորդին: Կար ավերված հասարակական ու անհատական գիտակցությունը, որին որոշակի հաջողություններով հասել էր խորհրդային քարոզչությունը:

ИДЕОЛОГИЧЕСКАЯ НАПРАВЛЕННОСТЬ СОВЕТСКОЙ АРМЯНСКОЙ ПЕРИОДИКИ В УСЛОВИЯХ ПОЛИТИЧЕСКОГО ДИКТАТА (1930-ые гг.)

МАРУТЯН А. Т.

Резюме

Пресса любой страны, принципы изложения газетных статей, их язык и стиль являются своеобразным отражением её социально-политической, экономической и культурной жизни. Сказанное довольно четко выявляется при анализе материалов центральных советских и республиканских органов печати, в частности “Правды” и “Советской Армении” 1936-37 гг. Данный хронологический отрезок являет собой кульминацию сталинских репрессий. При чтении этих периодических изданий бросается в глаза массовое использование отрицательных эпитетов в заголовках и текстах статей, направленных против членов т. н. “троцкистско-зиновьевского блока”. Наиболее часто встречаются такие характеристики, как “враг”, “предатель”, “контрреволюционер”, “вредитель”, “шпион”, а между тем в публикациях, посвященных фактически единоличному лидеру страны, перед взором читателя предстает персона, наделенная почти божественными чертами. Он – учитель, мудрый и любимый руководитель и в то же время отец, родной человек, просто друг. Он – самый

гениальный человек в мире, но с ним можно разговаривать, к нему можно обращаться на “ты”.

Советскому читателю, т.е. народу, преподносились такого рода противоречивые представления, навязывалась такая идентичность. Пожалуй, данное обстоятельство являлось одной из причин того, что определенная часть репрессированных и в наши дни не считает виновниками репрессий режим сталинизма и его главного вдохновителя и лидера.

THE IDEOLOGICAL PECULIARITIES OF SOVIET ARMENIAN PRESS UNDER THE CONDITIONS OF POLITICAL PRESSURE (1930 S)

H. MARUTYAN

Abstract

The press of each country, the principles of producing newspaper articles, their language, and style were specific manifestations of socio-political, economic, and cultural life of the country. This is efficiently demonstrated in the analysis of the central Soviet and Armenian republican press of 1936-1937 (the culmination of Stalin era repressions), in particular, in “Pravda” and “Sovetakan Hayastan”. While reading these periodicals, the first, which strike one’s eye, is the massive usage of negative epithets in the titles and texts of the articles, targeted against the members of the so-called “trotskist-zinovyev block”. The characteristics used most of all were “enemy”, “traitor”, “counter-revolutionary”, “saboteur”, “spy”.

At the same time, the publications addressing the factually sole leader of the country, highlighted a person, endowed with god-like skills. He is a teacher, a wise mentor, and at the same time, a father, a kindred spirit, just a friend. He is the most talented person in the world, but it is possible to talk to him.

These types of contrary perceptions, and identity were imposed on the Soviet reader. Obviously, one of the reasons that even nowadays, some of the repressed people do not blame Stalin regime of the main repressions can be due to the publications that featured the leader in a very inspiring light.

